ՏՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

(ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ)

DOI: 10.52174/2579-2989_2023.3-128

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

Հիմնաբառեր. *ոչ աշխատանքային տոնական օրեր, տնտեսական ազդեցություն, սպառողական ծախսեր, արտադրողականության բարձրացում, տոների հոգեբանական ազդեցություն, ազգապահպանություն, կենդանի շփման ազդեցություն*

Ազգային մշակութային քաղաքականության ռազմավարություն մշակելիս պետք է հաշվի առնել նաև տոների երևույթը: Ընդ որում, հարկ է նշել, որ տոնը «կենսունակ» է, եթե տոնական օրը ոչ աշխատանքային է: Հանրային տոները թույլ են տալիս լուծել մարդկանց կենդանի շփման խնդիրը՝ անուղղակիորեն բարձրացնելով աշխատուժի արտադրողականությունը: Տոների հիմնական սոցիալական գործառույթը քաղաքացիների համատեղ ժամանցի կազմակերպումն է, որն ունի տնտեսական և հոգեբանական բազմավեկտոր ազդեցություն, բայց միայն այն դեպքում, եթե այդ տոների թիվը չի գերազանցում ողջամիտ սահմանը՝ տարեկան 13-17 օր: Ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատումը կարող է ունենալ մի շարք բացասական տնտեսական հետևանքներ ինչպես անհատների, այնպես էլ տնտեսության համար: Ապացուցված է, որ հանգստացած աշխատողներն ավելի արտադրողական են, ինչը, անկասկած, երկարաժամկետ հեռանկարում ենթադրում է օգուտ ամբողջ երկրի տնտեսության համար: Թվային դարաշրջանում տոներն ինքնին կարող են դառնալ ազգային արժեհամակարգի պահպանման «փափուկ ուժի» գործիքներից մեկը:

Տոները կարող են էական ազդեցություն ունենալ երկրի տնտեսության, ինչպես նաև քաղաքացիների բարեկեցության վրա, իսկ ինչ վերաբերում է ազգային տոներին, ապա դրանք, բացի տնտեսության համար կարևոր իրադարձություն լինելուց, նաև արժեհամակարգի պահպանման ուժեղ գործիք

են: Երբ խնդիրը դիտարկում ենք անհատի մակարդակում, տոնն արդյունավետ ներգործություն ունի, քանի որ դա սոցիալական գործիք է, որը թույլ է տալիս շատ մեծ չափով լուծել անհատի անձնական հոգեբանական խնդիրները: Այս առումով, գործ ունենք վատ ուսումնասիրված՝ տնտեսագիտության և հոգեբանության ոլորտում միջգիտակարգային տիրույթի հետ, որը, սակայն, շատ խոստումնալից է աշխատանքի արտադրողականության բարձրացման տեսանկյունից: Յուրաքանչյուր սոցիոտեխնիկական համակարգում ամենաբարդ և անկանխատեսելի տարրը մարդն է, որն ունի առանձնահատկություններ, որոնց անտեսումը հակադարձ համեմատական է աշխատանքի արտադրողականությանը:

Տոնական օրերի տնտեսական մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ մարդիկ նախ՝ պատրաստվում են տոներին, հետո՝ բուռն կերպով նշում, այնուհետև փորձում վերադառնալ առօրյա կյանք: Մասնավորապես՝ ամանորյա տոներից հետո ամբողջ հունվարի ընթացքում նրանք փորձում են «ուշքի գալ», և այս ամենի արդյունքում պարզվում է, որ հունվարը, գործնականում, «դուրս է թռչում» տնտեսությունից:

Վերոնշյալ խնդիրն ուսումնասիրվել է երկարաժամկետ կտրվածքով՝ 1960-2010 թթ.-ի համար: Մշտադիտարկվել է խոշոր մարզական միջոցառումների, առաջին հերթին՝ օլիմպիական խաղերի և ֆուտբոլի աշխարհի առաջնությունների երկարաժամկետ ազդեցությունը: Ինչպե՞ս են այս իրադարձություններն ազդել միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի տեմպերի վրա այն երկրներում, որտեղ տեղի են ունեցել: Պարզվում է՝ ազդեցությունն ավելի շատ եղել է բացասական, քան դրական[1]: Այստեղ պատճառահետևանքային կառուցակարգը քիչ թե շատ պարզ է, քանի որ երբ ինչ-որ մեծ իրադարձություն է տեղի ունենում որևէ երկրում, վերջինիս կազմակերպման համար բավական մեծ միջոցներ են անհրաժեշտ լինում (չնայած, իհարկե, վերադարձ կա), ինչը կարող է մեծ ցնցման պատճառ դառնալ (բացառությամբ գերհզոր տնտեսություն ունեցող երկրների, օրինակ՝ ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան):

Ըստ գերմանացի փորձագետներ Յոահիմ Մերցի և Լարս Օսբերգի՝ տոները տնտեսության համար կարելի է համարել արդյունավետ, եթե դրանց թիվը տարեկան 13-17 օր է, այսինքն՝ եթե տնտեսական և սոցիալական հնարավոր օգուտները գերազանցում կամ հավասարակշռում են կորուստները: Փորձագետների կարծիքով՝ տոների հենց այս քանակն է երաշխավորում, որ դրանք չդառնան բեռ ո՛չ բնակչության (որպես ավելորդ ազատ ժամանակ իրենց կյանքում), ո՛չ էլ ազգային տնտեսության համար (բավականաչափ ժամանակ կլինի հարմարվելու յուրաքանչյուր ոչ աշխատանքային օրվանից հետո)[2]:

Ոչ աշխատանքային տոնական օրերի թիվը հատկապես ազդում է այն երկրների տնտեսությունների վրա, որտեղ աշխատանքային օրենսգիրքը խստորեն կիրառվում է (կան երկրներ, որտեղ դա չի կիրառվում, օրինակ՝ Ուկրաինայում): Պատճառներից են ստվերի մեծ մասնաբաժինը և թաքնված զբաղվածությունը: Հայաստանում, Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատմամբ, ոչ ֆորմալ (ստվերային) տնտեսությունը 36% է, որն ԱՊՀ տարածքում ամենաբարձր ցուցանիշներից է: Ըստ համաշխարհային բանկի 2019 թ. հրապարակած զեկույցի՝ դա հասնում է 46%-ի: Բացի այդ, Հայաստանն աշխարհում «առաջատարներից» է գործազրկության և աղքատության մակարդակի առումով[3]:

Իհարկե, համեմատության մեջ դնելով ոչ աշխատանքային և աշխատանքային օրերի ընթացքում ստեղծվող ավելացված արժեքը, ակնհայտ է դառնում, որ աշխատանքային օրերին ավելի մեծ ծավալով ՀՆԱ է ստեղծվում՝ կապված աշխատան-

[1] Алексей Белянин, Экономика праздника, 1/4/2013, https://postnauka.ru/video/7211
[2] Виктор Глумсков, Экономика праздника 17.03.2008, https://online.zakon.kz/Document/?doc_id=30167340&pos=5;-106#pos=5;-106
[3] Ա. Դաշտենց, Իսկ ո՞վ է ասել, որ ոչ աշխատանքային օրերին ՀՆԱ չի ստեղծվում, «Հրապարակ» օրաթերթ, 18.09.2021թ., https://hraparak.am/post/63d7f97a0e44c22b7246026880b732af

քային օրերի ընթացքում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերությունների պահպանման հետ: Բայց ոչ աշխատանքային օրերի՝ տնտեսությանը վնաս հասցնելը հիմնավորել միայն մաքուր տնտեսական վիճակագրությամբ և համախառն ներքին արդյունքի՝ կտրված տոկոսների տեսանկյունից, հաշվի չառնելով բազմաթիվ այլ ցուցանիշներ, այդքան էլ արդարացի չէ: Պայմանավորված այն հանգամանքով, որ, սկսած անցյալ դարի 70-ականներից, տնտեսական աճի և անհատների եկամուտների աճի միջև կապը խզվել է, վերջին տասնամյակների ընթացքում տնտեսական միտքը հանգել է նրան, որ ՀՆԱ-ն այլևս տնտեսական հաջողության, հանրային բարօրության և կյանքի որակի չափման համար բավարար ցուցանիշ չէ: ՀՆԱ-ն ներառում է միայն տնտեսության ոլորտների ստեղծած արդյունքները, սակայն անտեսում բազմաթիվ այլ ցուցիչներ, որոնք էական նշանակություն ունեն պետության զարգացման ու հանրության կյանքի բարելավման համար: ՀՆԱ հաշվարկից դուրս են մնում հանրության սոցիալ-տնտեսական առաջադիմության, լավ կառավարման, մարդկային զարգացման, ոչ ավանդական տնտեսական ակտիվության, ոչ ֆորմալ տնտեսության, ոչ ֆորմալ զբաղվածության, եկամուտների անհավասար բաշխման և, ի վերջո, հենց տնտեսության գործունեությունից բխող վնասակար հետևանքների մասին տվյալները, այնինչ նշվածները շատ ավելի մեծ կարևորություն ունեն տնտեսության մակարդակը հասկանալու գործընթացում, քան որոշակի վիճակագրական թվեր: Հետևաբար՝ տնտեսական իրական զարգացման մակարդակը գնահատելիս վերջին տասնամյակներում օգտագործվում են այլ բնութագրական արժեքներ, օրինակ՝ մարդկային զարգացման (HDI), մարդկային կապիտալի (HCI), սոցիալական առաջադիմության (SPI)[4] համաթվերը: Տնտեսությունն ինքնուրույնաբար որևէ կենսական հարց չի լուծում, ավելին, տնտեսագիտական մի շարք տեսությունների պնդմամբ՝ զուտ տնտեսական աճի վրա կենտրոնացումը հանգեցնելու է միայն անհավասարության աճին: Ժամանակակից աշխարհում պետության դերն այն է, որ, նախ և առաջ, ապահովվի որակյալ, կենսակայուն տնտեսություն և այն ծառայեցվի հանրության շահին, այլ ոչ թե պարզապես տեղի ունենա տնտեսության քանակական ցուցանիշների աճ: Կառավարության վերջնական նպատակը պետք է լինի բարեկեցիկ և արդար հասարակության ստեղծումը, որը կլինի տնտեսապես առաջադեմ, կայուն և քաղաքացիներին կապահովի կյանքի իմաստալից որակով: Այսպիսով՝ համատեքստից կտրված տընտեսական ցուցանիշներն ու ՀՆԱ աճի տոկոսներն իրական աշխարհում գրեթե առնչություն չունեն միջին վիճակագրական քաղաքացու կյանքի որակի հետ, և իրապես զարգացած ու առաջադեմ տնտեսություն ունենալու, ինչպես նաև հանրության բարօրությունն ապահովելու համար անհրաժեշտ են բազմակողմանի մոտեցումներ[5]:

Այսինքն՝ եթե ՀՀ-ում, մի քանի տոներին ընդառաջ, ավելացվեն ոչ աշխատանքային օրեր, շատ բան չի փոխվի՝ հաշվի առնելով այդ տոնական օրերի տնտեսական ազդեցությունը: Մինչդեռ աշխատանքային օրվա արտադրողականության վրա կարող է անդրադառնալ աշխատավայրի տեխնիկական հագեցվածության մակարդակը (օրինակ՝ 10 աշխատողի մեկ մեքենայով փոխարինելը մի քանի անգամ ավելացնում է արտադրողականությունը): Հայաստանում արտադրողականությունը բարձրացնելու համար, նոր տեխնոլոգիաներ ներդնելու փոխարեն, գործատուներն ավելի շատ աշխատողներ են ընդունում: Զարգացած երկրները, ընդհակառակը, արտադրողականությունը բարձրացնում են տեխնոլոգիաների և աշխատանքի մեքենայացման միջոցով, որը նույնիսկ հնարավորություն է տալիս կրճատելու աշխատանքային ժամերը: Արևմտյան Եվրոպայում միջին աշխատանքային շաբաթը 35 ժամ է: Օրինակ՝ Իռլանդիայում և Ֆրանսիայում աշխատում են յոթ ժամ: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Մեծ

[4] Ա. Դաշտենց, Իսկ ո՞վ է ասել, որ ոչ աշխատանքային օրերին ՀՆԱ չի ստեղծվում, «Հրապարակ» օրաթերթ, 18.09.2021թ., https://hraparak.am/post/63d7f97a0e44c22b7246026880b732af

[5] Նույն տեղում:

Բրիտանիան, Սինգապուրը, հանգստանում են ոչ ավելի, քան 10 օր, մալայզիացիները նշում են 17, հնդիկները, իսրայելցիները՝ 34 տոն[6]: Առաջատարը Հնդկաստանն է (21 օր), իսկ ամենաքիչ հանգստյան օրերը (7 օր) Մեքսիկայում են: Սա նշանակում է, որ տնտեսությունն ամեն շաբաթվա վերջին կորցնում է 3,7 միլիարդ դոլար: Իհարկե, որոշ բիզնեսներ օգուտ են քաղում արձակուրդից, հատկապես՝ ակումբներն ու ռեստորանները, բայց ընկերությունների 45%-ը տուժում է դրանից[7]: Միաժամանակ, իրենք՝ «երջանիկները», ավելի ու ավելի են բողոքում, որ տոները լրջորեն արգելակում են տնտեսության զարգացումը[8]:

Վրաստանում ոչ աշխատանքային է 14, Լատվիայում՝ 15, Էստոնիայում՝ 13, Ուկրաինայում՝ 12 տոնական օր: Ընդ որում, տոնը հանգստյան օրերի հետ համընկնելու դեպքում հաջորդող երկուշաբթին համարվում է ոչ աշխատանքային: Համաձայն Ռուսաստանի աշխատանքային օրենսգրքի՝ հանգստյան օրերի հետ համընկնող տոնական օրերի համար հավելյալ ոչ աշխատանքային օր է սահմանվում տոնին նախորդող կամ հաջորդող աշխատանքային օրը՝ ըստ կառավարության հայտարարության: Այստեղ տոնական ոչ աշխատանքային օրերը 14-ն են: Հանգստյանի հետ համընկնող տոնական օրերը մեկ այլ աշխատանքային օրով փոխարինելու փորձ գործում է Նոր Զելանդիայում և Ճապոնիայում: Ճապոնիայում 2000-ականների սկզբին ներդրվել է «Ուրախ երկուշաբթի» հայեցակարգը՝ որոշ տոներին հաջորդող երկուշաբթիները դարձնելով ոչ աշխատանքային և սահմանելով եռօրյա հանգստյան օրեր[9]:

Իրականում, սոցիալական կապիտալի ավելացմամբ շահագրգռվածները, հիմքում ունենալով վստահության և համագործակցության կապերի ամրապնդումը, պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն ազգային տոների տարածման առաջարկներին:

Այժմ մի շարք պետություններում ուսումնասիրություններ են կատարվում ոչ աշխատանքային օրերի թիվն ավելացնելու ուղղությամբ:

Կան տոներ, որոնք հատկապես մեծ նշանակություն են ունենում համաշխարհային տնտեսության համար (օրինակ՝ Լուսնային Ամանորը): Չինական Նոր տարին ամենակարևոր տոնն է երկրում: Այն տևում է գրեթե մեկ ամիս և, իհարկե, շահույթ է բերում բիզնեսին. խանութները, հանրային սննդի ու զբոսաշրջային օբյեկտները զգալի եկամուտ են ապահովում, սակայն բարելավում նկատելի է տնտեսության ոչ բոլոր ոլորտներում: Օրինակ՝ մեքենաների վաճառքն այդ ընթացքում ավանդաբար կրճատվում է: Բացի այդ, արդյունաբերական արտադրությունը կտրուկ կերպով նվազում է, որն էապես ազդում է ոչ միայն Չինաստանի, այլև էլեկտրոնիկա և հագուստ գնող այլ երկրների տնտեսական ցուցանիշների վրա[10]:

Չինաստանի կառավարությունը բարեփոխել է պետական տոների համակարգը, որը երկրում գործում էր 1999 թվականից: Այս համակարգի հիմնական տարրը երեք, այսպես կոչված, «ոսկի շաբաթներն» էին՝ յոթ օր տևողությամբ շարունակական համապետական արձակուրդը (տոնական և հանգստյան օրերի համադրմամբ): «Ոսկի շաբաթները» ժամանակի ընթացքում բեռ էին դարձել երկրի տրանսպորտային և զբոսաշրջային ենթակառուցվածքների համար, որոնք ստեղծվել էին, որ երկրի բնակիչներն ավելի շատ գումար ծախսեն՝ զարգացնելով տեղական տուրիզմը: Ի վերջո, կառավարությունը որոշեց հրաժարվել մայիսյան տոների մեկ շաբաթից՝ թողնելով ընդամենը մեկ օր, բացի այդ, սահմանվեցին երեք լրացուցիչ տոներ՝ կապված ավանդական ժողովրդական փառատոների հետ: Այսպիսով՝ տոների ընդհանուր

[7] Как праздники влияют на экономику разных стран Россия — не самый плохой вариант, 18:56, 29 апреля 2016, https://secretmag.ru/trends/tendencies/kak-prazdniki-vliyayut-na-ekonomiku.htm

[8] Виктор Глумсков, Экономика праздника 17.03.2008, https://online.zakon.kz/Document/?doc_id=30167340&pos=5;-106#pos=5;-106

[9] Ա. Ավետիսյան, Ովքեր են ավելի շատ հանգստանում. ոչ աշխատանքային օրերի քանակը տարբեր երկրներում, 21.04.2021թ., https://fip.am/15241

[10] Как праздники влияют на экономику разных стран Россия — не самый плохой вариант, 18:56, 29 апреля 2016, https://secretmag.ru/trends/tendencies/kak-prazdniki-vliyayut-na-ekonomiku.htm

թիվն ավելացավ՝ 10-ից դառնալով[11]:

Թե որքանով են չինական տոներն ազդում այլ երկրների տնտեսությունների վրա, կարելի է համոզվել՝ դիտարկելով Չինաստանի և ԱՄՆ-ի համագործակցության տվյալները: Հատկապես ակնառու է եղել ազդեցությունը 2012 թվականին՝ Չինաստանի ապրանքների արտահանումը դեպի ԱՄՆ փետրվարին կրճատվել է ռեկորդային՝ 28 միլիարդ դոլարով, մինչդեռ ներմուծումն աճել է 14,4 միլիարդ ԱՄՆ դոլարով, ինչը հանգեցրել է 19,3 միլիարդ ԱՄՆ դոլարի առևտրային պակասուրդի[12]:

Ինչ վերաբերում է հնդկական տոներին, ապա համաշխարհային տնտեսությունը դեմ է հնդկական ոչ աշխատանքային տոնական օրերին, քանի որ երկիրն ունի տարեկան մոտավորապես 21 պետական տոներ և այդ ցուցանիշով առաջիններից մեկն է աշխարհում: 2015 թվականի մարտի վերջին և ապրիլի սկզբին պետական տոների պատճառով բանկերը յոթ օրով փակվել են: Ըստ The Economic Times-ի հնդկական խմբագրության սյունակագրի՝ նման «բանկային արձակուրդը» հանգեցրել է բազմաթիվ խնդիրների, օրինակ՝ բանկոմատներում կանխիկի պակասի[13]: Հնդկաստանի տնտեսության համար պետական տոներն արժեցել են մեկ միլիարդ ռուփի (մոտ 25 միլիոն ԱՄՆ դոլար)[14]:

Միջոցառումների տնտեսությունը բավական բարդ և նուրբ է, քանի որ ներառում է որոշ իրարամերժ տարրեր: Օրինակ՝ ինչպե՞ս են ոչ աշխատանքային տոնական օրերն ազդում ՀՆԱ-ի վրա, և, միաժամանակ, ինչպե՞ս են տոներն օգնում մարդուն հասնել հավասարակշռության և լուծել հոգեբանական խնդիրները:

Տոնական և հանգստյան օրերը, պայմանավորված ոչ աշխատանքային լինելու հանգամանքով, իրենց ազդեցություն են թողնում ինչպես համախառն ներքին արդյունքի, այնպես էլ տնտեսության հիմնական ոլորտների արտադրանքի (ծառայությունների) թողարկման ծավալների, արտաքին տնտեսական գործունեության (արտահանման և ներմուծման ծավալներ), ինչպես նաև տեղական և օտարերկրյա գործընկեր կազմակերպությունների հետ պայմանագրային հարաբերությունների իրականացման վրա[15]:

Այստեղ կարևորն աշխատանք - կյանք հարաբերակցությունում ճիշտ հավասարակշռության հասնելն է, հատկապես այն պարագայում, երբ գլոբալացման գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում մարդկային կյանքի բոլոր ոլորտների վրա: Թվային դարաշրջանը զգալիորեն անդրադարձել է հաղորդակցության վրա՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով: Օրինակ՝ դրական ազդեցություններին կարելի է դասել մատչելիության մակարդակի բարձրացումը, քանի որ թվային հաղորդակցման գործիքները հեշտացրել են իրական ժամանակում մարդկանց շփումը միմյանց հետ՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Հեշտանալու հետ մեկտեղ, հաղորդակցության ձևերում տեղի են ունեցել փոփոխություններ. անցում է կատարվել հեռավար աշխատանքի և համագործակցության, կրճատվել են ճանապարհորդության ծախսերն ու ժամանակը, դյուրացել է կապ հաստատելու գործընթացն ամբողջ աշխարհի մարդկանց հետ՝ թույլ տալով դեմ առ դեմ փոխգործակցության կրճատում: Սակայն, միաժամանակ, թվային հաղորդակցման գործիքների հեշտությունն ու հարմարավետությունը նվազեցրել են մարդկանց՝ դեմ առ դեմ փոխգործակցության հաճախականությունը՝ բացասաբար ազդելով սոցիալական հմտությունների, հուզական ինտելեկտի և ոչ խոսքային նշաններ կարդալու ունակության վրա: Կարճ ձևով հաղորդակցությունը դարձել է ավելի տարածված, ինչը հան-

[11] Виктор Глумсков, «Экономика праздника», 17.03.2008, https://online.zakon.kz/Document/?doc_id=30167340&pos=5;-106#pos=5;-106

[12] Как праздники влияют на экономику разных стран Россия — не самый плохой вариант, 18:56, 29 апреля 2016, https://secretmag.ru/trends/tendencies/kak-prazdniki-vliyayut-na-ekonomiku.htm

[13] Նույն տեղում:

[14] Հաշվարկները կատարել են All India Industrial Association-ի փորձագետները:

[15] Հիմնավորում ««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, https://www.e-draft.am/projects/2983/justification

գեցրել է բարդ գաղափարներ և զգացմունքներ արտահայտելու ունակության նվազմանը: Այս ամենը դրսևորվել է նաև բիզնեսում: Թվային դարաշրջանը, ազդելով կենդանի հաղորդակցության վրա, ճկունությանը զուգահեռ, հանգեցրել է ընտանեկան, ընկերական, ինչու չէ, նաև աշխատանքային թիմի համախմբվածության նվազմանը:

Կենդանի կամ անձնական շփումը դրական նշանակություն ունի անհատների և հասարակության համար: Անհատի՝ որպես հասարակության արժանի անդամի արժեհամակարգի ձևավորման օրրանն ընտանիքն է, որի հետ շփումը, ավա՜ղ, վերջին տարիներին, պայմանավորված տարբեր հանգամանքներով, շատ է նվազել... Նման իրավիճակում, երբ հնարավոր չէ աշխարհում տիրող արագընթաց կյանքի ռիթմը փոխել, միակ ելքը որոշակի կանգառներ (ընդմիջումներ) անելն է՝ անդրադառնալով ամենակարևորին՝ շփման միջոցով արժեհամակարգի պահպանմանը... Որպես նման կանգառներ, որոնք կխթանեն կենդանի շփումը, կարող են դառնալ օպտիմալ քանակի ոչ աշխատանքային տոնական օրերը, որոնց՝ միջազգային փորձով ապացուցած դրական ազդեցությունը՝ և՛ հոգեբանական, և՛ տնտեսական տեսանկյունից, անվիճելի է:

Իսկ ինչ վերաբերում է գերլարված, հագեցած աշխատանքային ժամանակացույցով կառուցված կյանքի ռիթմին՝ նվազագույնի հասցված ոչ աշխատանքային օրերի քանակով, ապա դա քայլ առ քայլ տանում է սոցիալական մեկուսացման, ինչը կարող է բացասաբար ազդել մարդու հոգեկան առողջության վրա: Ոչ աշխատանքային օրերի կրճատումը կարող է դժվարացնել այլ մարդկանց հետ շփումը, իսկ շփումների կրճատումը, բացի հոգեբանական հետևանքներից, կարող է ունենալ տնտեսական հետևանքներ ևս:

Օրինակ՝ ՀՀ-ում վերջին երկու տարիներին բավական հակասություններ կային՝ կապված Ամանորի ոչ աշխատանքային հանգստյան օրերի կրճատման հետ: Բնականաբար, կարող են լինել տարբեր դիրքորոշումներ և տարբեր տեսակետներ սրա լավ կամ վատ լինելու վերաբերյալ:

Ոչ աշխատանքային օրերի կրճատման համար որպես հիմնավորում է ծառայել տնտեսության հիմնական ճյուղերի (արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի և ծառայությունների) 2015-2020 թթ. հունվարի ՀՆԱ և 2015-2019 թթ. 1-ին եռամսյակի ցուցանիշների միջին օրական թողարկման ծավալը, որի հիման վրա էլ հաշվարկվել են լրացուցիչ 5 աշխատանքային օրերի գնահատվող թողարկման ծավալները, այսինքն՝ լրացուցիչ 5 աշխատանքային օրերի արդյունքում ակնկալվող տնտեսական դրական ազդեցությունը (գծապատկեր 1):

1. Հունվարի աշխատանքային օրեր՝ միջինը **16 օր**:
2. 1-ին եռամսյակի աշխատանքային օրեր՝ միջինը **57 օր**:
3. Տնտեսության հիմնական ճյուղերի ընդհանուր թողարկման միջին օրական ծավալը հունվարին կազմել է միջինը **24.6 մլրդ դրամ**:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Գնահատման արդյունքներ, 2015-2020 թթ., հունվար[16]

[16] Հիմնավորում, ««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, https://www.e-draft.am/projects/2983/justification

ԱՂՅՈՒՍԱԿ 1

2015-2020 թթ. ոչ աշխատանքային օրերի համընկնումը հանգստյան օրերի հետ (շաբաթ, կիրակի)

	2015	2016	2017	2018	2019	2020
31-ը դեկտեմբերի		+	+			
3-ը հունվարի	+	+				
4-ը հունվարի	+					+
5-ը հունվարի					+	+
7-ը հունվարի			+	+		

ԱՂՅՈՒՍԱԿ 2

2021-2028 թթ. ոչ աշխատանքային օրերի համընկնումը հանգստյան օրերի հետ (շաբաթ, կիրակի)

	2021	2022	2023	2024	2025	2026	2027	2028
31-ը դեկտեմբերի		+	+					
3-ը հունվարի						+	+	
4-ը հունվարի					+	+		
5-ը հունվարի					+			
7-ը հունվարի			+	+				

Ըստ գնահատման արդյունքների՝ 5 լրացուցիչ աշխատանքային օրերի դեպքում այլ հավասար պայմաններում՝

- համախառն ներքին արդյունքի ծավալը կավելանա 88.6 մլրդ դրամով,
- համախառն թողարկման ծավալը կավելանա 123 մլրդ դրամով, որից՝
  - առևտրի թողարկումը կավելանա 47.5 մլրդ դրամով,
  - արդյունաբերության թողարկումը կավելանա 35.4 մլրդ դրամով,
  - ծառայությունների թողարկման ծավալը կավելանա 33.9 մլրդ դրամով,
  - գյուղատնտեսության և շինարարության թողարկման ծավալները կավելանան համապատասխանաբար՝ 3.5 և 2.9 մլրդ դրամով[17]:

Ամեն պարագայում, նախորդ տարիների հետ համեմատելով (2015-2020 թթ. ժամանակահատվածը դիտարկելով), կարող ենք ասել, որ ոչ մի տարի չենք ունեցել 5 աշխատանքային օրերի կորուստ:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 2015 թվականի հունվարի 3-ը և 4-ը, 2016 թվականի հունվարի 3-ը և դեկտեմբերի 31-ը, 2017 թվականի հունվարի 7-ը և դեկտեմբերի 31-ը եղել են շաբաթ և կիրակի, 2018 թվականի հունվարի 7-ը՝ կիրակի, 2019 թվականի հունվարի 5-ը՝ շաբաթ, 2020 թվականի հունվարի 4-ը և 5-ը՝ շաբաթ և կիրակի: Այսինքն՝ 2015-2020 թվականներին նշված տոների կապակցությամբ ոչ աշխատանքային օրերը հունվարից կամ 1-ին եռամսյակից 5 աշխատանքային օրերի կորուստ չեն հարուցել:

Աղյուսակ 2-ից երևում է, որ գրեթե նույն պատկերն է 2021-2028 թթ.:

Հասկանալու համար տոների հոգեբանական և տնտեսական ազդեցությունը հանրության կյանքում կատարել ենք հարցում 200 հոգու շրջանում՝ ըստ տարբեր տարիքային խմբերի:

Հարցումը թույլ է տվել հայտնաբերել մի շարք խնդիրներ, որոնք ի հայտ են գալիս ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման հետևանքով:

Հարցվողները նշել են, որ ոչ աշխատանքային տոնական օրերը հնարավորություն են տալիս կտրվելու աշխատանքից, իսկ աշխատանքի վերադառնալուց հետո բարձրացնելու արտադրողականության մակարդակը: Միաժամանակ, նրանք բացասաբար են արտահայտվել Նոր տարվա տոնական ոչ աշխատանքային օրերի կրճատման որոշման մասին: Այդ հանգստյան օրերը, նրանց համոզմամբ, բավական վերականգնողական նշանակություն ունեն:

Հարցման ենթարկվածները պնդել են,

[17] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հարցվողների զբաղվածությունը և զբաղվածության ոլորտը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման հոգեբանական հետևանքները

որ ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատումը հատկապես բացասաբար է ազդում ընտանեկան շփումների վրա:

Ոչ աշխատանքային տոնական օրերը, որպես կանոն, դրականորեն են անդրադառնում քաղաքացիների բարեկեցության վրա՝ թույլ տալով նրանց ժամանակ անցկացնել ընտանիքի և ընկերների հետ, ինչը, իր հերթին, հանգեցնում է մտավոր և ֆիզիկական առողջության բարելավմանը, ինչպես նաև աշխատանքի վերադառնալու դեպքում՝ արտադրողականության բարձրացմանը:

Հարցվողների կարծիքով՝ ոչ աշխատանքային տոնական օրերն օգնում են փոքրիշատե նվազեցնել սթրեսի մակարդակը, ինչն էլ կարող է դրական ազդեցություն ունենալ ֆիզիկական և մտավոր առողջության վրա: Այսպիսով՝ նշված օրերի կրճատումը ինքնաբերաբար հանգեցնում է տոնակատարությունների կրճատմանը, ինչն էլ, իր հերթին՝ կյանքի որակի վատթարացմանը: Իսկ այս ամենի տրամաբանական շարունակությունն է սթրեսի, ընկճախտի նկատմամբ խոցելիությունը: Այս պարագայում կունենանք սպառողական ծախսերի փոխարինում առողջապահական ծախսերով (գծապատկեր 4):

Տնտեսական առումով, ոչ աշխատանքային տոնական օրերը հաճախ կապվում են ճանապարհորդության հետ: Պայմանավորված այդ օրերի կարճաժամկետ բնույթով՝ դրանք հատկապես նպաստում են ներքին զբոսաշրջության զարգացմանը, որը եկամտի զգալի աղբյուր է շատ երկրների և տարածաշրջանների համար:

Ոչ աշխատանքային օրերի կրճատման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հաշվարկել աշխատանքային և ոչ աշխատանքային օրերի թողարկման միջին ծավալների տարբերությունը, ցույց տալ ոչ աշխատանքային օրերի համեմատ աշխատանքային օրերի թողարկման ծավալների աճը և շոշափելի դրական տարբերության



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման հոգեբանական հետևանքները

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Սպառողական ծախսերի փոփոխությունը՝ կախված ոչ աշխատանքային տոնական օրերի քանակից

դեպքում հիմնավորել ոչ աշխատանքային օրը աշխատանքայինով փոխարինելու գաղափարը: Հակառակ պարագայում, երբ չկա աշխատանքային և ոչ աշխատանքային օրերի թողարկման ծավալների տարբերակում, կարող է հարց առաջանալ, թե ինչու, օրինակ, առևտրի ճյուղում թողարկման օրական ծավալը ոչ թե աշխատանքային, այլ ոչ աշխատանքային օրերին է ավելի մեծ:

Երբ կրճատվում են ոչ աշխատանքային տոնական օրերը, մարդիկ ավելի քիչ գումար են ծախսում քաղաքից դուրս ժամանցի և հանգստի կազմակերպման ուղղությամբ, ինչը հանգեցնում է սպառողական ծախսերի նվազմանը և տնտեսական աճի դանդաղմանը, որոնցից տուժում են հատկապես մարզերը: Զբոսաշրջության արդյունաբերությունն այս պարագայում, եկամուտների անկմամբ պայմանավորված, կարող է կրճատել աշխատատեղերը, իսկ տեղական համայնքները կարող են կանգնել տնտեսական դժվարությունների առջև: Այս առումով ևս, հարցման ենթարկվածները խիստ բացասաբար էին արտահայտվում Նոր տարվա տոների ոչ աշխատանքային օրերի կրճատման մասին, քանի որ այդ տոնը, ըստ նրանց, հիանալի հնարավորություն էր քաղաքից դուրս գնալու, ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու համար:

Տոները կարող են կարևոր դեր խաղալ մշակութային ինքնության և համախմբվածության խթանման գործում: Ազգային տոները, օրինակ, կարող են օգնել ամրապնդել երկրի ինքնությունը և նպաստել սոցիալական համախմբվածությանը:

Հարցվողները նշում էին, որ ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման հետևանքով արձանագրվում է սպառողական ծախսերի կրճատում:

Այսինքն՝ հանգստյան օրերը հաճախ ենթադրում են գումար ծախսել ճանապարհորդության, կացարանների, տոնական սննդի, նվերների և ժամանցի վրա: Տոնական աշխատանքային օրերին մարդիկ ավելի քիչ գումար են ծախսում տոնակատարությունների համար, ինչը հանգեցնում է սպառողական ծախսերի կրճատմանը:

Միջազգային փորձը վկայում է, որ հատկապես որոշակի տոներ (Սուրբ ծնունդ, Բայրամ, Դիվալի և Գոհաբանության օր) խթանում են սպառողական ծախսերը:

Ոչ աշխատանքային օրերի կրճատմամբ ակնկալվում է, որ կապահովվի սոցիալ-տնտեսական և ֆինանսական համակարգերի բնականոն գործունեությունը, ինչը դրական ազդեցություն կունենա առևտրի, արդյունաբերության, ծա-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման բացասական ազդեցությունը որոշակի ոլորտների վրա



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Ոչ աշխատանքային տոնական օրերը՝ որպես մշակութային կարիքների բավարարման հնարավորություն

ռայությունների թողարկման ծավալի և այլ բնագավառների վրա, մինչդեռ նման մոտեցումը կարող է բազմաթիվ այլ հետևանքներ ունենալ: Օրինակ՝ Ամանորը և Սուրբ ծնունդը մեր ազգի համար կարևոր տոներից են՝ ընտանեկան նրբերանգով համեմված: Դրանք տարվա մեջ այն եզակի օրերից են, երբ մարդիկ հնարավորություն են ունենում այցելելու միմյանց, շփվելու իրար հետ, ինչը չի հաջողվում տարվա ընթացքում՝ գերբեռնված ժամանակացույցով աշխատելու պատճառով: Եվ եթե որևէ ոլորտ պետք է այդ օրերին աշխատի, ապա աշխատում է, ու մարդիկ էլ դրա դիմաց կրկնակի են վարձատրվում: Տոնական օրերին առողջապահական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի, հասարակական սննդի, առևտրի և այլ ոլորտների աշխատանքը կանգ չի առնում և իրականացվում է հանգստի համապատասխան ռեժիմով: Ընդհանուր առմամբ, տոնական օրեր սահմանելիս պետք է հաշվի առնել ազգային սովորույթները, տոնին նախապատրաստվելու մշակույթը:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման կամ ավելացման ազդեցությունը երկրի տնտեսության և բարեկեցության վրա կարող է տարբեր լինել՝ կախված որոշակի հանգամանքներից: Օրինակ՝ որոշ ձեռնարկություններ կարող են տուժել տոնական օրերին, եթե չկարողանան աշխատել, իսկ որոշ քաղաքացիներ կարող են ֆինանսական հնարավորություն չունենալ տոնակատարություններին լիարժեքորեն մասնակցելու համար:

Ընդհանուր առմամբ, ոչ աշխատանքային տոնական օրերի կրճատման բացասական տնտեսական հետևանքները կարող են էական լինել՝ ազդելով անհատի բարեկեցության, բիզնեսի արտադրողականության և ավելի լայն՝ տնտեսական աճի վրա: Կարևոր է հավասարակշռել ոչ աշխատանքային տոնական օրերի անհրաժեշտությունը աշխատանքի և այլ պարտականությունների պահանջների հետ՝ ապահովելով առողջ ու բարգավաճ աշխատուժ և տնտեսություն:

Հանգստացած աշխատողների պարագայում ենթադրվում է աշխատանքի արտադրողականության բարձրացում, իսկ երկարաժամկետ հեռանկարում, անկասկած, օգուտ երկրի տնտեսության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-200, 24.06.2001 թ.:
2. ««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-362-Ն, 17.11.2021 թ.:
3. Հիմնավորում ««Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, https://www.e-draft.am/projects/2983/justification
4. Ամանորյա ոչ աշխատանքային օրերի կրճատում, 16.09.2021 թ., https://www.armtimes.com/hy/article/221015
5. Ա. Ավետիսյան, Ովքեր են ավելի շատ հանգստանում. ոչ աշխատանքային օրերի քանակը տարբեր երկրներում, 2021 թ., https://fip.am/15241
6. Ա. Դաշտենց, Իսկ ո՞վ է ասել, որ ոչ աշխատանքային օրերին ՀՆԱ չի ստեղծվում, «Հրապարակ» օրաթերթ, 18.09.2021 թ., https://hraparak.am/post/63d7f97a0e44c22b-7246026880b732af
7. Алексей Белянин,Экономика праздника, 1.4.2013, https://postnauka.ru/video/7211
8. Петр Ковалев,Отметить Новый год и не разориться. Шесть шагов, как подготовиться к праздникам, 18.11.2022, https://tass.ru/ekonomika/9874201
9. Арина Раксина, Как управлять личными финансами, чтобы сберечь деньги и нервы,10.06.2020, https://tass.ru/ekonomika/8676543
10. Виктор Глумсков, Экономика праздника, 17.03.2008, https://online.zakon.kz/Document/?doc_id=30167340&pos=5;-106#pos=5;-106
11. Звягина Д. А. «Мягкая сила»: структурный анализ // Инициативы XXI в. 2012. № 3 С. 135-137
12. Как праздники влияют на экономику разных стран Россия — не самый плохой вариант, 29.04.2016, https://secretmag.ru/trends/tendencies/kak-prazdniki-vliyayut-na-ekonomiku.htm
13. Кибалко В. В. Место праздника в культуре постмодерна // Научные ведомости Белгородского государственного университета. Серия: Философия. Социология. Право. 2019. Т. 44. № 2. С. 318-322
14. Тузовский И.Д., Глобальный праздник как культурный феномен Цифровой эпохи // Человек и культура. 2020,№ 4. С. 33-48. DOI: 10.25136/2409-8744.2020.4.31767 URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=31767
15. Більш детально за посиланням: 20.02.2017, https://uteka.ua/ua/publication/news-14-delovye-novosti-36-kak-prazdniki-vliyayut-na-ekonomiku-strany-infografika
16. Allen, T. D., & Martin, A. (2017). The work-family interface: A retrospective look at 20 years of research in JOHP. Journal of Occupational Health Psychology, 22(3), 259-272, 278-308.
17. Allen, T. D., Johnson, R. C., Kiburz, K. M., & Shockley, K. M. (2013). Work–family conflict and flexible work arrangements: Deconstructing flexibility. Personnel Psychology, 66(2), 345-376.
18. Amstad, F. T., Meier, L. L., Fasel, U., Elfering, A., & Semmer, N. K. (2011). A meta-analysis of work–family conflict and various outcomes with a special emphasis on cross-domain versus matching-domain relations. Journal of Occupational Health Psychology, 16(2), 151-169.
19. Clark, M. A., Michel, J. S., Zhdanova, L., Pui, S. Y., & Baltes, B. B. (2016). All in a day's work: How employees' daily work tasks affect their behaviors and well-being. Academy of Management Journal, 59(5), 1662-1687.
20. Clark, S. C. (2000). Work/family border theory: A new theory of work/family balance. Human Relations, 53(6), 747-770.
21. Goetzel, R. Z., Ozminkowski, R. J., Sederer, L. I., & Mark, T. L. (2002). The business case for quality mental health services: Why employers should care about the mental health and well-being of their employees. Journal of Occupational and Environmental Medicine, 44(4), 320-330.
22. Grawitch, M. J., Barber, L. K., & Allen, T. D. (2010). Work–family conflict at work, job satisfaction, and outcomes: Mediating and moderating role of work–family conflict. Journal of Vocational Behavior, 76(1), 65-76.
23. Greenhaus, J. H., & Powell, G. N. (2006). When work and family are allies: A theory of work-family enrichment. Academy of Management Review, 31(1), 72-92.
24. Grzywacz, J. G., Almeida, D. M., & McDonald, D. A. (2002). Work-family spillover and daily reports of work and family stress in the adult labor force. Family Relations, 51(1), 28-36.

25. Hemp, P. (2004). Presenteeism: At work—but out of it. Harvard Business Review, 82(10), 49-58.
26. Hytti, U., & Kuopusjärvi, P. (2016). Leisure activities and entrepreneurs' work–family balance: A resource-based view. Journal of Small Business Management, 54(4), 1214-1234.
27. Iwata, Y., & Otani, K. (2017). Work-to-life conflict and economic activity in Japan. Japanese Economic Review, 68(4), 488-510.
28. Kelliher, C., & Anderson, D. (2010). Doing more with less? Flexible working practices and the intensification of work. Human Relations, 63(1), 83-106.
29. Kossek, E. E., & Lautsch, B. A. (2018). Work-family boundary management and sustainable careers across the lifespan: A lifespan boundary model. Organizational Psychology Review, 8(4), 338-360.
30. Zhan, G., & Waddell, G. R. (2018). Work-life balance and economic growth: A cross-national study of manufacturing firms. Management International Review, 58(5), 705-727.

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

ПРАЗДНИЧНЫЕ ТРАДИЦИИ КАК СОСТАВЛЯЮЩАЯ СОХРАНЕНИЯ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ (Экономический и психологический эффект нерабочих праздничных дней)

Феномен праздников необходимо учитывать при разработке стратегий национальной культурной политики, на состоятельность которых большое влияние оказывает нерабочий характер последней. Государственные праздники позволяют решить проблему живого общения между людьми, косвенно повышая производительность труда. Основной социальной функцией праздников является организация совместного досуга граждан, что имеет экономический и психологический многовекторный эффект, но только в том случае, если количество этих дней не превышает разумных пределов - 13-17 дней в году. Сокращение нерабочих отпусков может иметь ряд негативных экономических последствий как для отдельных лиц, так и для экономики. Расслабленные работники будут работать более продуктивно, что, несомненно, принесет пользу всей экономике страны в долгосрочной перспективе. В цифровую эпоху сами праздники могут стать одним из инструментов «мягкой силы» для поддержания национальной системы ценностей.

Ключевые слова: *нерабочие праздники, эффект экономии, потребительские расходы, повышение производительности труда, психологический эффект праздников, национализм, эффект живого общения*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the «Amberd» Research Center, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

FESTIVE TRADITIONS AS A VITAL COMPONENT OF VALUE SYSTEM PRESERVATION (The Economic and Psychological Impact of Non-Working Holidays)

The phenomenon of holidays should be taken into account when developing national cultural policy strategies. The viability of holidays is greatly influenced by the non-working nature of the latter. Public holidays play a crucial role in solving the problem of meaningful face-to-face communication, indirectly contributing to increased workforce productivity. The main social function of holidays is the organization of collective entertainment of citizens, which has an economic and psychological multi-dimensional impact, as long as their number does not exceed reasonable limits - ranging from 13 to17 days per year. Reduced non-working holidays can have a number of negative economic consequences for both individuals and the economy. A more relaxed workforce tends to be more productive ultimately benefiting the nation's economy in the long run. In the digital age, holidays themselves can serve as one of the "soft power" tools for maintaining the national value system.

Keywords: *non-working holidays, economic effect, consumer spending, productivity increase, psychological impact of holidays, nationalism, impact of face-to-face communication*